# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru , qajaran.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 1-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքիղեկավարի տեղակալի /համայնքի ղեկավարին փոխարինողի/ առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի 2021թ.-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2021թ դեկտեմբերի 27-ի թիվ 51-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի խնամակալության եվ հոգաբարձության մարմնին կից խնամակալության եվ հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 41-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

4. Վիլեն Սեյրանի Գրիգորյանին <<Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն>> ՓԲԸ տնօրենի պաշտոնում նշանակելուն համաձայնություն տալու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru , qajaran.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 2-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի 2021թ.-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն 1, 2, 3,4, 5 և 6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԶՈՀՐԱՊ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2022թ. փետրվարի 17**
**Ք.Քաջարան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru , qajaran.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 3-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով համայնքիղեկավարի տեղակալի /համայնքի ղեկավարին փոխարինողի/առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի Քաջարան համայնքի 2022թ.-ի բյուջեն հաստատելու մասին թիվ 51-Ն>> որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 2, 3 ,4, 5 և 6 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԶՈՀՐԱՊ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2022թ. փետրվարի 17**
**Ք.Քաջարան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru , qajaran.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 4-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի ԹԻՎ 41-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով,,Նորմատիվ իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի տեղակալի /համայնքի ղեկավարին փոխարինողի/ առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՁՈՀՐԱՊ ԱՌԱՔԵԼՅԱՆ

2022թ փետրվարի 17 , Քաջարան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru , qajaran.syuniq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 5-Ա

ՎԻԼԵՆ ՍԵՅՐԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ <<ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՓԲԸ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, համաձայն համայնքի ղեկավարի տեղակալի /համայնքի ղեկավարին փոխարինողի /առաջարկության, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Վիլեն Սեյրանի Գրիգորյանին <<Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն>> ՓԲԸ տնօրենի պաշտոնում նշանակելուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԶՈՀՐԱՊ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2022թ" փետրվարի 17**
**Ք"Քաջարան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru , qajaran.syuniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 6-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով Քաջարան համայնքի ղեկավարի տեղակալի /համայնքի ղեկավարին փոխարինողի/ առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է՝.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարել հատկացում՝

1. «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ին՝ 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ - սանիտարական մաքրման աշխատանքների պատշաճ կազմակերպումն իրականացնող մեքենայի ավլող խոզանակների ձեռք բերման համար,

2. «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ին՝ 2 600 000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ - ISUZU ELF 250 ավտոաշտարակի հիմնանորոգման համար:

3. «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ին՝ 1 603 550 (մեկ միլիոն վեց հարյուր երեք հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ-քաղաքացիների խմելաջրի և աղբահանության վարձավճարների գծով պարտավորությունների վճարման համար՝ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 22.12.2020թ.-ի թիվ N 67-Ն որոշմամբ սահմանված հավելված 7-ի և հավելված 8-ի դրույթներով,

4. <<Քաջարան>> համատիրությանը՝ 32 140 (երեսուներկու հազար մեկ հարյուր քառասուն) ՀՀ դրամ – պատվավոր քաղաքացիների բնակարանների սպասարկման 2021 թվականի վարձավճարների համար:

5. Հայաստանի համայնքների միություն՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ-Քաջարան համայնքի 2021թ-ի տարեկան անդամավճար,

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԶՈՀՐԱՊ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2022թ. փետրվարի 17**
**Ք.Քաջարան**